ԳԻՏԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ARMDOCT
ERASMUS+ PROJECT

Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union

Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

ARMDOCT
ERASMUS+ PROJECT

MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF THE REPUBLIC OF ARMENIA

Էրազմուս+ ARMDOCT ծրագիրը եռամյա է, որի նպատակն է բարեփոխել դոկտորական կրթությունը Հայաստանում Զալցբուրգի սկզբունքներին համահունչ՝ ազգային քաղաքականության և իրավական կարգավորող փաստաթղթերի, ինստիտուցիոնալ ընթացակարգերի վերանայման, գիտության և հետազոտության ինտեգրման համար անհրաժեշտ համակարգի ապահովման միջոցով: Այն կոչված է խթանելու բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների, արդյունաբերության ոլորտի սերտ համագործակցությունը՝ ուղղված դոկտորական կրթության միջազգայնացմանը, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (EHEA) և Եվրոպական բարձրագույն հետազոտական տարածքին (ERA) ինտեգրմանը: Նախագծին անդամակցում են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, ԵՄ (Պորտուգալիա, Իտալիա, Ֆրանսիա, Լիտվա) երկրների չորս և Հայաստանի ութ բուհեր, ինչպես նաև Հայաստանի գիտահետազոտական երկու ինստիտուտ:

The ARMDOCT project addresses an urgent need in Reforming Doctoral Education (DE) in Armenia in line with the Salzburg Principles with the emphasis on policy, legal framework (including by-laws), and institutional procedures supporting integrative and internationally-oriented doctoral studies involving universities, research institutions, and industry. The vision is Reformed Doctoral Education (DE) in Armenia in line with the Salzburg Principles with national and institutional policies and regulations supporting integrative and internationally-oriented doctoral studies involving universities, research institutions, and industry.

EURASIA INTERNATIONAL UNIVERSITY · UFAR UNIVERSITÉ FRANÇAISE EN ARMÉNIE · UNIVERSITÉ LYON III JEAN MOULIN · Vilnius University · UNIVERSITÀ DEGLI STUDI DI TERAMO · UNIVERSIDADE CATOLICA PORTUGUESA PORTO · IIAP NAS RA

ASPU ARMENIAN STATE TEACHERS' TRAINING UNIVERSITY NAMED AFTER KHACHATUR ABOVYAN

«Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» («ԱՐՄԴՈԿՏ») ծրագիր

ԳԻՏԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Կազմողներ՝

Մարիաննա Հարությունյան, ՀՊՄՀ

Հարություն Վերմիշյան, ԵՊՀ

Աննա Խվորոստյանկինա, ԵՄՀ

Հասմիկ Հովհաննիսյան, ՀՊՄՀ

Խմբագիր՝

Ռուբեն Մարկոսյան, ԵՄՀ

Երևան – 2023

ՀՏԴ 174:001

ԳՄԴ 87.752+72
Գ 602

Հրատարակության է երաշխավորվել
Եվրասիա միջազգային համալսարանի
գիտական խորհրդի կողմից:

Կազմողներ՝ Մարիաննա Հարությունյան, Հարություն Վերմիշյան,
Աննա Խվորոստյանկինա, Հասմիկ Հովհաննիսյան

Խմբագիր՝ Ռուբեն Մարկոսյան

Գիտական բարեվարքության ուղեցույց / Կազմողներ՝ Մ. Հարությունյան, Հ. Վերմիշյան, Ա. Խվորոստյանկինա, Հ. Հովհաննիսյան. Եր.: Եվրասիա միջազգային համալսարան, 2023. 48 էջ:

Ուղեցույցը նախատեսված է տարբեր ոլորտներում հետազոտություններ իրականացնողների, սովորողների, հետազոտողների, գիտնականների, գիտական ղեկավարների համար: Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև ներկազմակերպական գիտական բարեվարքության կանոնների մշակման և ներդրման գործընթացում:

Ուղեցույցը մշակվել և հրատարակվել է Եվրոպական միության «Էրազմուս+» կարողությունների զարգացման «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» («ԱՐՄԴՈԿՏ») ծրագրի շրջանակներում:

www.armdoct.com

Սույն հրապարակման բովանդակության համար պատասխանատու է ԱՐՄԴՈԿՏ ծրագրի համապատասխան աշխատանքային խումբը, և այն ոչ մի կերպ չի կարող դիտարկվել որպես ծրագիրը ֆինանսավորող կողմի տեսակետների արտահայտում:

ՀՏԴ 174:001
ԳՄԴ 87.752+72

ISBN 978-9939-866-08-6

https://doi.org/10.53614/9789939866086

© Եվրասիա միջազգային համալսարան, 2023

© Հեղինակային խումբ, 2023

Reforming Doctoral Education in Armenia in Line with Needs of Academia, Industry and Current EU Practices (ARMDOCT)" Project

GUIDEBOOK FOR SCIENTIFIC INTEGRITY

Compilers

Marianna Harutyunyan, ASPU

Harutyun Vermishyan, YSU

Anna Khvorostiankina, EIU

Hasmik Hovhannisyan, ASPU

Editor

Ruben Markosyan, EIU

Yerevan – 2023

UDC 174:001

The guidebook is recommended for
publication by the Scientic Council of the
Eurasia International University

Compilers: Marianna Harutyunyan, Harutyun Vermishyan, Anna Khvorostiankina, Hasmik Hovhannisyan,

Editor: Ruben Markosyan

Guidebook for Scientific Integrity / Compilers M. Harutyunyan, H. Vermishyan, A. Khvorostiankina, H. Hovhannisyan. Yerevan, Eurasia International University, 2023, 48 p:

The guidebook is developed for researchers, students, scientists, and scientific supervisors working in various fields. The guidebook can be useful for the process of development and implementation of institutional scientific integrity code of conduct.

The guidedbook is developed and published in the framework of EU funded Erasmus+ “Reforming Doctoral Education in Armenia in Line with Needs of Academia, Industry and Current EU Practices (ARMDOCT)” Project.

www.armdoct.com

The contents of this publication are the sole responsibility of ARMDOCT project working group and can in no way be taken to reflect the views of the project donor.

ISBN 978-9939-866-08-6

https://doi.org/10.53614/9789939866086

© Eurasia International University, 2023

© Authors, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան. 6

1. Գիտահետազոտական բարեվարքության սկզբունքները. 8

2. Հետազոտության իրականացման փուլերը. 13

3. Հեղինակային իրավունք և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հրապարակում 17

4. Գիտահետազոտական գործունեություն 24

5. Գրականության ցանկ և օգտակար հղումներ 35

Հավելվածներ

Հավելված 1.

Գրագողության դեպքերի վերհանման և կանխարգելման ուղենիշներ...36

Հավելված 2.

Թեզի, ատենախոսության/հետազոտական աշխատանքի գրախոսության ձևաթերթիկ 41

ՆԱԽԱԲԱՆ

Գիտության զարգացման արդի փուլի ուշագրավ առանձնահատկություններից մեկն այն է, որ բարեվարքության հետ կապված խնդիրներն էլ ավելի ակնառու և առաջնային տեղ են զբաղեցնում: Անշուշտ, հետաքրքրությունն այս խնդիրների նկատմամբ նոր չէ, այն ունի երկար և բովանդակալից պատմությունը, այդուհանդերձ բարեվարքության հետ կապված տարբեր հարցերի քննարկումը որոշակի առումով ընտրովի բնույթ է կրել: Հարցը միշտ էլ կարևոր է եղել գիտական համայնքի համար, սակայն միջոցների ժամանակակից թվայնացումը և համացանցը զգալիորեն փոխակերպել են գիտնականների հաղորդակցման միջավայրը, որի ազդեցությամբ ձևավորված արագ փոփոխվող միջավայրը պահանջում է մշտական զգոնություն և արագ հարմարեցում նոր պայմաններին: Նախկինում հետազոտողները, գիտնականները և նրանց ղեկավարներն իրենց առօրյա գործունեության ընթացքում ստիպված չեն եղել այդքան ժամանակ ծախսել և ջանք գործադրել ոչ միայն իրենց հետազոտության հետ կապված հարցերը քննարկելու, այլ նաև գիտական բարեվարքության շրջանակներում տարբեր լուծումներ գտնելու համար: Նրանք երբևէ այդքան ժամանակ չեն հատկացրել՝ քննարկելու և հետամուտ լինելու բարեվարքության կանոններին: Միևնույն ժամանակ, նախկինում գիտական հետազոտությունները և դրանց կիրառությունը նման ինտենսիվ և մանրամասն կարգավորման առարկա չեն եղել՝ ոչ միայն էթիկական, այլև նաև իրավական տեսանկյուններից:

Հաշվի առնելով գիտության ոլորտում բարեվարքության կանոնների առկայության և խիստ պահպանման անհրաժեշտությունը՝ ներկայումս ակտիվորեն մշակվում են մի շարք նորմատիվ ակտեր՝ ինչպես միջազգային ու ազգային, այնպես էլ ներգերատեսչական մակարդակներում:

Սույն ձեռնարկը նախատեսված է տարբեր ոլորտներում հետազոտություններ իրականացնողների, սովորողների, հետազոտողների, գիտնականների, գիտական ղեկավարների համար: Ձեռնարկի նպատակն է լուսաբանել հետազոտության էթիկան և բարեվարքության սկզբունքները՝ ուղղորդելով հետազոտողներին իրենց հետազոտական աշխատանքում խուսափել խաբեությունից և (կամ) գիտակցաբար կամ անգիտակցաբար հետազոտության մասնակիցներին վնաս պատճառելուց, ինչպես նաև ներկայացնել իրենց հետազոտության իրական արդյունքները՝ առանց միտումնավոր կամ անփութությամբ պայմանավորված խեղաթյուրումների: Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև ներ-

կազմակերպական բարեվարքության կանոնների մշակման և ներդրման գործընթացում:

Գիտական բարեվարքության ուղեցույցը մշակվել է Եվրոպական միության «Էրազմուս+» կարողությունների զարգացման «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» («ARMDOCT[1]») ծրագրի շրջանակներում:

ARMDOCT ծրագրի նպատակն է բարեփոխել դոկտորական կրթությունը Հայաստանում Ձալցբուրգի սկզբունքներին համահունչ՝ ազգային քաղաքականության և իրավական կարգավորող փաստաթղթերի, ինստիտուցիոնալ ընթացակարգերի վերանայման, գիտության և հետազոտության ինտեգրման համար անհրաժեշտ համակարգի ապահովման միջոցով: Ձեռնարկի կազմողները, համադրելով արդի միջազգային փորձը և ՀՀում առկա զարգացումները, փորձել են հնարավորինս համակարգված ներկայացնել գիտական գործունեության հետ կապված բարեվարքության հիմնական խնդիրները: Ձեռնարկի կազմման ժամանակ օգտագործվել են տարբեր կազմակերպությունների մշակած և հրապարակած կանոնակարգեր և այլ փաստաթղթեր:

[1] Reforming Doctoral Education in Armenia in Line with Needs of Academia, Industry and Current EU Practices (ARMDOCT) https://armdoct.com/

1. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գիտական և հետազոտական գործունեության էթիկայի կամ բարեվարքության կարգերն ու նորմերը խարսխված են մի շարք առանցքային սկզբունքների վրա և համապատասխան կանոնակարգերում դրանց համապարփակ ներկայացումը ապահովում է գիտական հանրույթի գործունեության ընդհանուր արժեքային համակարգի կայացումը, նպաստում է վստահության և համագործակցության միջավայրի ձևավորմանը և աջակցում անհրաժեշտ որակի ապահովմանը՝ ընդգծելով ազնվության, օբյեկտիվության և հիմնավորված մեթոդաբանության կարևորությունը:

Նախանշելով ակնկալվող վարքագիծը՝ էթիկական սկզբունքները նպաստում են հետազոտողների հաշվետվողականությանը՝ խրախուսելով նրանց գործել բարեխղճորեն և պատասխանատու, ինչը ի վերջո պետք է ապահովի հասարակական լայն շրջանակների վստահությունը հետազոտության արդյունքների հանդեպ:

Վարքագծի կանոնակարգերում էթիկական սկզբունքների ներկայացումը համապարփակ շրջանակ և ենթատեքստ է հանդիսանում փաստաթղթի այլ գլուխներում մանրամասն շարադրված նորմերի ու պահանջների բացատրության, հիմնավորման և մեկնաբանության համար: Սկզբունքների հստակ, անվերապահ շարադրումը ապահովում է լայն հեռանկար՝ օգնելով մարդկանց հասկանալ ոչ միայն այն, ինչ պետք է արվի, այլև ինչո՞ւ դա պետք է արվի:

Սույն ուղեցույցում առանձնացված են 15 սկզբունքներ, որոնք դիտարկվել են տարբեր երկրների և կազմակերպությունների համապատասխան բարեվարքության կանոնակարգերում (*ACRCR, 2018; CCRRUC, 2018; ECCRI, 2017; GRP, 2017; DCCRI, 2014)*: Սկզբունքները ներկայացված են համապատասխան ամփոփ մեկնաբանություններով:

Բարեվարքության սկզբունքներ	**Նկարագրություն**
Ազնվություն /Honesty/	Գիտական գործունեության բոլոր փուլերում ազնվության պահպանումը հիմնարար պայման է: Գիտնականը պետք է ազնիվ և ճշգրիտ տեղեկատվություն ներկայացնի հավաքագր-

	ված տվյալների, արդյունքների, հետազոտության մեթոդների և ընթացակարգերի, ինչպես նաև հրապարակման կարգավիճակի վերաբերյալ: Արգելվում է կեղծել, խեղաթյուրել կամ ընտրողաբար ներկայացնել տվյալները, սուտ տվյալներ տրամադրել կամ մոլորեցնել գործընկերներին, ֆինանսավորող կամ դրամաշնորհառու կազմակերպություններին, գիտահետազոտական և կրթական հաստատությունների ներկայացուցիչներին, պետական կամ մասնավոր կառույցներին և գիտական հանրությանը:
Օբյեկտիվություն/ անաչառություն /Objectivity/	Գիտական գործունեությանը ընդգրկված բոլոր դերակատարները պետք է խուսափեն կողմնապահությունից հետազոտության պլանավորման, տվյալների վերլուծության, մեկնաբանման և հրապարակման, ինչպես նաև գործընկերների աշխատանքի գնահատման, գիտական խմբի անդամների հավաքագրման, ֆինանսական հատկացումների և (կամ) դրամաշնորհների տրամադրման, փորձագիտական եզրակացությունների և գիտական գործունեության այլ բաղադրիչների ընթացքում անհրաժեշտ գործողություններ իրականացնելիս: Հետազոտողը պետք է բացառի ցանկացած անձնական և (կամ) կորպորատիվ շահ, որը կարող է ազդել գիտական հետազոտության կատարման հնարավորության, ընթացքի կամ արդյունքի անաչառության վրա:
Բարոյականություն /Morality/	Գիտական գործունեությանը ընդգրկված բոլոր դերակատարները պետք է կատարեն իրենց բոլոր պարտականությունները՝ հետևելով բարոյական բարձր արժեքներին, ապահովեն մտքերի և գործողությունների հետևողականությունը և տրամաբանությունը: Բարոյականության բարձր չափանիշները խրախուսում են համապատասխան գործողություններ իրականացնելիս նվազագույնի հասցնել վնասը, հաշվի առնել գործունեության ավելի լայն բարոյական և սոցիալական հետևանքները:

Գիտակցված մոտեցում, խոհեմություն /Prudence/	Գիտական գործունեությանը ընդգրկված բոլոր դերակատարները պետք է խուսափեն անզգուշությամբ և (կամ) անփութությամբ պայմանավորված սխալներից և բացթողումներից: Կարևոր է գիտակցաբար և քննադատաբար գնահատել ինչպես սեփական, այնպես էլ գործընկերների աշխատանքը:
Թափանցիկություն / Լայնախոհություն /Openness/	Հետազոտողը պետք է ներկայացնի տվյալները, գաղափարները, գործիքները և միջոցները՝ մշտապես բաց լինելով քննարկումների, քննադատության և նոր գաղափարներ լսելու և դիտարկելու համար:
Հարգանք մտավոր սեփականության նկատմամբ /Respect for intellectual property/	Գիտական գործունեությանը ընդգրկված բոլոր դերակատարները պետք է հարգեն այլոց մտավոր սեփականության արդյունքները՝ արտոնագրերը, հեղինակային իրավունքի և մտավոր սեփականության այլ ձևերը, չօգտագործեն չհրապարակված հետազոտության տվյալները, մեթոդները կամ արդյունքներն առանց համապատասխան մարմնի թույլտվության: Հրապարակումներում, ըստ անհրաժեշտության մեջբերումներ կատարելով հրապարակված աշխատանքներից կամ օգտագործելով այդ հրապարակումներում ներկայացված տեղեկատվությունը, գաղափարներն ու մոտեցումները, անհրաժեշտ է հղում կատարել սկզբնաղբյուրին: Գրագողությունը խստիվ արգելվում է: Հետազոտողը պետք է հավուր պատշաճի իր երախտագիտությունը հայտնի հետազոտության ընթացքում իրեն օժանդակություն ցուցաբերած անձանց կամ կազմակերպություններին:
Գաղտնիություն /Confidentiality/	Հետազոտողը պետք է ստանձնի հետազոտական աշխատանքի ընթացքում ձեռք բերված գաղտնի տեղեկատվությունը պաշտպանելու օրենսդրությամբ սահմանված պարտավորությունը: Այն ներառում է պետական ու առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը և անձնական տվյալները: Վերջիններիս հրապարակումը թույլատրելի է միայն սահմանված կարգով համապատասխան կողմից համաձայնություն ձեռք բերելուց հետո: Անհրաժեշտ է պահպանել աշխատակիցների

	անձնական գրառումների, փորձագիտության ներկայացված հայտերի և դրանց բովանդակության, ինչպես նաև ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող անձանց / սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը:
Պատասխանատու հրապարակում /Responsible publication/	Հետազոտողը պետք է հրապարակի հետազոտության արդյունքները հանուն գիտության առաջընթացի և առկա գիտելիքի հարստացման, այլ ոչ թե ի շահ սեփական կարիերայի: Հետազոտողը պետք է խուսափի անհարկի հրապարակումներից կամ գիտական նորույթ չպարունակող վերահրապարակումներից: Կրկնակի հրապարակումները թույլատրելի են միջազգային հրապարակումների լեզու չհանդիսացող մայրենի լեզվով հրապարակումների պարագայում՝ կրկնակի հրապարակման փաստը չթաքցնելու կամ չքողարկելու պարագայում:
Պատասխանատու կառավարում /Responsible management/	Գիտական գործունեության ղեկավարման գործընթացներում ընդգրկված անձինք պետք է ապահովեն առկա միջոցների արդյունավետ կառավարումը / օգտագործումը և որոշումների անաչառ կայացումը: Այն ներառում է ֆինանսավորման, ժամանակի և անձնակազմի պատասխանատու բաշխում, ինչպես նաև հետազոտական գործունեության անվտանգ և արդյունավետ կազմակերպման ապահովում: Երիտասարդ հետազոտողների գիտական ղեկավարը պետք է նպաստի գործընթացի կրթական բաղադրիչի կայացմանը, սովորեցնի կայացնել որոշումներ և դրանց համար կրել պատասխանատվություն:
Հարգանք գործընկերների նկատմամբ /Respect for colleagues/	Գիտական գործունեությանը ընդգրկված բոլոր դերակատարները պետք է հարգեն միմյանց և ցուցաբերեն միմյանց հանդեպ ազնիվ ու հարգալից վերաբերմունք:
Սոցիալական պատասխանատվություն /Social responsibility/	Գիտական գործունեությանը ընդգրկված բոլոր դերակատարները պետք է նպաստեն հանրության սոցիալական բարեկեցությանը և խուսափեն հանրությանն ու շրջակա միջավայրին հասցվող վնասից, վտանգից կամ հնարա-

	վորինս նվազեցնեն դրանք հետազոտության, հանրային կրթության և իրազեկման միջոցով:
Խտրականության դեմ /Antidiscrimination/	Գիտական գործունեությանը ընդգրկված բոլոր դերակատարները պետք է խուսափեն ուսանողների կամ գործընկերների նկատմամբ՝ սեռով, ռասայական պատկանելությամբ, ազգությամբ կամ գիտական աստիճանի գերազանցությամբ պայմանավորված խտրականությունից: Որպես գերակայություն պետք է ընդունվի բացառապես ներկայացրած գաղափարի գիտական արժեքը:
Իրավասություն /Competence/	Հետազոտողը ողջ կյանքի ընթացքում պետք է պահպանի և բարելավի սեփական մասնագիտական կարողությունները շարունակական ուսուցման միջոցով և միջոցներ ձեռնարկի գիտության բնագավառում իր մասնագիտական կարողությունները խթանելու համար:
Օրինականություն /Legitimacy/	Գիտական գործունեությանը ընդգրկված բոլոր դերակատարները պետք է տիրապետեն իրենց աշխատանքային ոլորտին առնչվող համապատասխան օրենսդրական դաշտին, ինչպես նաև ինստիտուցիոնալ և պետական քաղաքականությանը և իրենց գործունեությունը համապատասխանեցնեն վերջիններիս պահանջներին:
Գիտական հետազոտություններում ներգրավված մարդկանց անվտանգությունը /Security of people involved in scientific research/	Մարդկանց ներգրավմամբ իրականացվող հետազոտություններում պետք է նվազագույնի հասցնել նրանց պատճառվող վնասն ու ռիսկերը՝ առավելագույնի հասցնելով հետազոտությունից ակնկալվող օգուտը: Հետազոտողը պետք է հարգի մարդու արժանապատվությունը, անձնական տվյալների գաղտնիությունը, անկախությունը և ինքնավարությունը: Հետազոտողը պետք է հատուկ նախապատրաստական աշխատանքներ իրականացնի բնակչության խոցելի խավերի մասնակցությամբ հետազոտություններ անցկացնելիս և ձգտի համարժեք օգուտների և դժվարությունների արդար բաշխմանը:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Հետազոտական գործունեությունը ներառում է մի շարք հստակ առանձնացված փուլեր և գործողություններ, որոնց ամբողջականությունը երաշխավորում է, որ ողջ գործընթացն իրականացվում է խստորեն պահպանվող մեթոդաբանությամբ, էթիկական նորմերի կիրառմամբ և առավելագույն ճշգրտությամբ, ինչը, ի վերջո, հանգեցնում է տվյալ ոլորտի գիտելիքների ամբողջության համակարգում վստահելի և արժեքավոր ներդրման: Հետազոտական աշխատանքները մեկնարկում են մանրակրկիտ նախագծման փուլից, որի ընթացքում հետազոտողները մանրամասն ձևակերպում են իրենց հետազոտական հարցերը, մշակում մեթոդաբանություններ և դնում իրենց հետազոտությունների հիմքը: Առաջ շարժվելով՝ իրականացման փուլը ներառում է հետազոտական պլանի գործնական իրականացում, որը կարող է ներառել տվյալների հավաքագրում, փորձեր կամ դաշտային աշխատանք: Հետագայում կենտրոնական տեղ է զբաղեցնում մշակման և հետազոտության արդյունքների վերլուծության փուլը, որի ընթացքում հավաքված տվյալները համակարգվում են, մաքրվում, ուսումնասիրվում և մեկնաբանվում ՝ իմաստալից եզրակացություններ ստանալու համար:

Այս բոլոր փուլերը միասին ճանապարհ են հարթում դեպի հաջորդ գործողությունների, մասնավորապես՝ հրապարակումների իրականացում, որոնց արդյունքում հետազոտական աշխատանքների արդյունքները ներկայացվում են լայն գիտական համայնքին և հանրային շրջանակներին, և արտոնագրերի ձեռքբերում, որոնց միջոցով նորարարական հայտնագործությունների հեղինակային իրավունքները կարող են արդյունավետ իրավաբանորեն պաշտպանվել և միաժամանակ առևտրայնացվել՝ ի շահ հասարակության, գիտական ձեռքբերումների հեղինակների, այդ աշխատանքներին աջակցություն ցուցաբերած կառույցների և հետագա հետազոտությունների իրականացման:

Ստորև համառոտ ներկայացվում են հետազոտության իրականացման վերոհիշյալ փուլերը և դրանց առնչվող բարեվարքության հիմնական պահանջները:

1) Հետազոտության նախագծում

Հետազոտության նախագծման փուլում անհրաժեշտ է ցուցաբերել հետևողականություն և անկողմնակալություն:

Հետազոտական գործունեությունը պետք է սկսել հետազոտության նախագծմամբ՝ պահպանելով մեթոդաբանական սկզբունքները և մեթոդական ընթացակարգերը:

Անհրաժեշտ է մշակել հետազոտական ծրագիր՝

- հիմնավորել հետազոտական հիմնախնդրի արդիականությունը և հրատապությունը.
- վկայակոչել և վերլուծել առկա ուսումնասիրությունները և (կամ) հրապարակումները՝ պահպանելով քննադատական մտածողության կանոնները.
- սահմանել հետազոտության նպատակը՝ ընդգծելով հետազոտական հարց(եր)ը.
- հստակ և հիմնավորված ներկայացնել հետազոտության օբյեկտը և առարկան.
- ձևակերպել նպատակին ուղղված չափելի և համապարփակ հետազոտական խնդիրները.
- կախված հետազոտական նախագծից (կամ դրանով սահմանված պահանջ(ներ)ից)՝ առաջադրել գիտական վարկած.
- համակողմանի և հիմնավորված պատճառաբանել հետազոտության մեթոդների ընտրությունը.
- ըստ մեթոդների՝ որոշակիացնել հետազոտական միավորը՝ ընտրության սկզբունքների և (կամ) ընթացակարգերի մշակմամբ:

Մշակել կամ տեղայնացնել հետազոտական գործիք(ներ)ը՝ ստուգելով դրանց կիրառելիությունը կամ համապատասխանությունն ու հուսալիությունը հետազոտական նպատակին:

Սահմանել հետազոտության հնարավոր սահմանափակումները և (կամ) ընթացակարգային ռիսկերը:

Ցուցաբերել խնդրակենտրոն մոտեցում, անհրաժեշտության դեպքում պատրաստ լինել դուրս գալ կաղապարվածության շրջանակներից՝ ի նպաստ որակյալ հետազոտության:

2) Հետազոտության իրականացում

Ելնելով ոլորտից/մասնագիտությունից՝ հետևել հետազոտության իրականացման տեղական (ազգային, պետական, ակադեմիական, մասնագիտական) և միջազգային (ակադեմիական, մասնագիտական) կարգավորումներին և չափորոշիչներին՝ ըստ

անհրաժեշտության խորհրդակցելով մասնագիտական հաստատությունների, համայնքների, միավորումների, խորհուրդների և կազմակերպության ներսում գործող կառույցների ու գործընկերների հետ:

Հետազոտության իրականացման փուլում հետամուտ լինել մեթոդաբանական/մեթոդական ընթացակարգերին՝ հաշվի առնելով հեղինակային և հարակից իրավունքները:

Լինել ազնիվ սեփական անձի, հետազոտության սուբյեկտի / օբյեկտի և գիտական համայնքի նկատմամբ՝ չկեղծելով, չձևափոխելով կամ նենգափոխելով տվյալները (Martyn, 2003):

Հետազոտության շահակիցներին (հետազոտության սուբյեկտը / օբյեկտը, կազմակերպությունը, որում կամ որի հետ համատեղ իրականացվում է հետազոտությունը, մասնագիտական հանրույթ, ստորաբաժանում և այլն) մանրամասն իրազեկել հետազոտության տվյալների անվտանգության և կիրառելիության խնդիրների մասին՝ բարձրաձայնելով հնարավոր իրավական ու բարոյական խնդիրներն ու ռիսկերը:

- Մշակել իրազեկման թերթիկ կամ համաձայնագիր:
- Անհրաժեշտության դեպքում դիմել իրավական և (կամ) մասնագիտական խորհրդատվության:
- Ըստ անհրաժեշտության հետազոտության մասնակիցների համար մշակել աշխատանքային հարաբերությունները կարգավորող գործիքակազմ՝ համաձայն գործող Աշխատանքային օրենսգրքի, կամավորական գործունեությունը կարգավորող իրավական և (կամ) ծրագրային սկզբունքների:
- Զերծ մնալ այնպիսի գործիքակազմից կամ ընթացակարգերից, որոնք կարող են հետազոտության կողմերին կամ մասնակիցներին պատճառել ֆիզիկական, սոցիալ-տնտեսական կամ հոգեբանական վնաս:

Լինել ներառական՝ կիրառելով հետազոտական միավորների ներկայացուցչական և (կամ) տիպական ընդգրկվածությանն ուղղված գործիքակազմ՝ տեխնիկապես և (կամ) միտումնավոր չբացառելով հետազոտության տեսանկյունից կարևոր միավորների և (կամ) դեպքերի ընդգրկման հնարավորությունը:

Տվյալների հավաքագրման փուլում հետևողականորեն պահպանել երաշխավորված և մասնագիտական էթիկայի կանոններին համապատասխանող հետազոտության տվյալների պահ-

պանման անվտանգության, անանունության կամ գաղտնիության* պահանջները (Babbie, 2013):

Դաշտային աշխատանքների իրականացման դեպքում չխոչընդոտել այլ հետազոտողների մուտքը դաշտ և չխաթարել հետազոտողի հեղինակությունը:

3) Հետազոտության արդյունքների մշակում և վերլուծություն

Անհրաժեշտ է հետևողականորեն պահպանել տվյալների գաղտնիության պաշտպանությունը և տեղեկատվության անանունությունը երաշխավորող տեխնիկական ընթացակարգերին՝ արդյունքների մշակման և վերլուծության փուլում:

Լինել թափանցիկ և շահակիցներին ազնվորեն ներկայացնել հետազոտության նախագծման և (կամ) դաշտային աշխատանքների իրականացման սահմանափակումների կամ թույլ տված սխալների հետևանքով ծագած, այդ թվում՝ տվյալների հուսալիության, հավաստիության և կիրառելիության խնդիրները:

Ստուգել հետազոտության տվյալների հուսալիությունը / հավաստիությունը, տարբերակել հետազոտության առաջնային և երկրորդային տվյալները, քննադատորեն դիտարկել տվյալները և (կամ) արդյունքները՝ կիրառելով հուսալիության բարձրացմանը միտված մոտեցումներ և ընթացակարգեր:

Պահպանել գիտական հրապարակումներին և շտեմարաններին արվող հղումների, հետազոտության ֆինանսավորման աղբյուրները և աջակիցներին նշելու ընդունված մոտեցումները:

Հետևել հետազոտության գործիքների, մեթոդաբանական ընթացակարգերի, հետազոտության տվյալների և նրանց արխիվացման, անվտանգության ապահովման տեղական և միջազգային կանոններին և չափորոշիչներին:

Միաժամանակ ապահովել տվյալները բաց և վերարտադրելի դարձնելու ընդունելի, այլոց չվնասող ընթացակարգեր (Kang & Hwang, 2020):

* **Անանունություն -** երբ ոչ ոք (նույնիսկ հետազոտողները) չեն կարող տվյալը նույնականացնել որևէ անձի/աղբյուրի հետ. **գաղտնիություն -** երբ հետազոտողը կարող է նույնականացնել անձը/աղբյուրը, սակայն ընթացակարգերով երաշխավորում և ապահովում է դրա չհանրայնացումը/չհրապարակումը (Babbie, 2013, pp. 35–36):

3. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Պատշաճ կերպով պլանավորված և իրականացված հետազոտական գործունեությունը, ի վերջո, պետք է արդյունք ունենա, որն էլ իր հերթին կարող է դառնալ մտավոր սեփականության առարկա կամ հրապարակում: Դրա հետ մեկտեղ հետազոտական աշխատանքները կարող են ներառել խարդախության տարբեր դրսևորումներ (կեղծումներ, հորինումներ), կարող են տեղ գտնել գրագողության կամ ինքնագրագողության դեպքեր: Այս գլխում քննարկվում են վերոհիշյալ երևույթներին առնչվող հարցեր, ներկայացվում են ակադեմիական ազնվության և մտավոր սեփականության իրավունքների հետ կապված որոշ խնդիրներ:

a. Հեղինակային իրավունք

Հեղինակային իրավունքը կարգավորում է ստեղծագործությունների՝ գրական, գեղարվեստական և մտավոր, այդ թվում՝ գիտահետազոտական գործունեության արդյունք հանդիսացող նորարարությունների հետ կապված իրավական պաշտպանության (սեփականության իրավունք) հարաբերությունները՝ պաշտպանելով հեղինակային իրավունքները և նպաստելով հանրային հասանելիության և մտավոր սեփականության միջև հավասարակշռությանը: Մտավոր սեփականության պաշտպանությունը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 60), իսկ հեղինակային իրավունքի պաշտպանությունը ամրագրված է մի շարք ներպետական և միջազգային իրավական ակտերով (ՀՀ օրենքը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին, 2006, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հեղինակային իրավունքի պայմանագիր, 1996 և այլն)[2]:

Հեղինակային իրավունքը պայմանավորված է հեղինակի կամ հեղինակային խմբի գիտական ներդրմամբ: Հեղինակային իրա-

[2] Առավել մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությանը վերաբերող օրենսդրությունը (օրենքներ, միջազգային պայմանագրեր, ենթաօրենսդրական ակտեր) ներկայացված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գրասենյակի պաշտոնական կայքում՝ https://aipo.am/hy/pages/show/legislation

վունքը ներառում է մի շարք իրավական ակտերով և ուղեցույցներով երաշխավորված կարևոր ակադեմիական, սոցիալական և ֆինանսական պատասխանատվության տարրեր՝ միաժամանակ պաշտպանելով հեղինակների իրավունքները, հեշտացնելով գիտելիքի հաղորդումը և խթանելով սոցիալտնտեսական առաջընթացը: Սահմանված նորմերի որոշ մասն ուղղված է ապահովելու հետազոտական աշխատանքի արդյունք հանդիսացող հրապարակման ստեղծման թափանցիկությունը՝ կանխելով բարեվարքության կանոնների հնարավոր խախտումները:

Հետազոտական աշխատանքներ իրականացնող անձինք պետք է ծանոթանան հեղինակային իրավունքի կանոնակարգերի կիրառելի դրույթներին: Միջազգային մասնակցությամբ իրականացվող հետազոտությունների դեպքերում (օրինակ՝ խմբի միջազգային անդամներ, միջազգային ֆինանսավորում, էմպիրիկ տվյալների միջազգային աղբյուրներ և այլն) ավելի կարևոր է դառնում հեղինակային իրավունքի մասին օրենքների և կարգերի լիարժեք դիտարկումը, քանի որ դրանք կարող են տարբերվել ազգային կարգավորումներից, իսկ հնարավոր խախտումները կարող են անցանկալի հետևանքներ ունենալ միջազգային հետազոտական համագործակցության ծավալման և լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման տեսանկյունից: Աշխատանքի պլանավորման փուլում խմբի հետ պետք է հանգամանալից քննարկել համապատասխան հարցերը, համաձայնություն ձեռք բերել, ցանկալի է՝ գրավոր ձևաչափով:

Կարևոր է հստակեցնել, թե ինչպես են կարգավորվում հեղինակային իրավունքին առնչվող հարցերն առանձին հրատարակիչների կողմից. որոշ հրատարակիչներ թույլ են տալիս պաշտոնապես չհրապարակված աշխատանքները («պրեպրինտները») տարածել նախքան հրապարակելը, մյուսները՝ ոչ, ճիշտ այնպես, ինչպես որոշ հրատարակիչներ թույլ են տալիս վերարտադրել սեփական հրատարակության որոշակի հատվածներ, մյուսները՝ ոչ:

Գիտական հետազոտությունների արդյունքների հրապարակումը նույնպես առնչվում է հեղինակային իրավունքի և օրենսդրական հստակ կարգավորումների հետ: Հեղինակային իրավունքը անձեռնմխելի է և անփոփոխ: Պետք է հստակ տարբերակել մտավոր սեփականության բարոյական ասպեկտները (չփոխանցելի) և

նյութական (փոխանցելի) բաղադրիչները: «Չփոխանցելի» տարրերը հիմնականում վերաբերում են սկզբնական ստեղծող կամ իրական հեղինակ հանդիսացող անձի բարոյական իրավունքներին, իսկ «փոխանցելի» մասը վերաբերում է տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց պայմանագրերի, լիցենզիաների կամ վաճառքի միջոցով փոխանցվող նյութական իրավունքներին, որոնք կարող են ներառել արտոնագրեր կամ մտավոր սեփականության այլ նյութական տարրեր: Հաճախ հրատարակման նյութական (փոխանցելի) իրավունքը կարող է պատկանել հրատարակչին կամ հովանավորին: Այստեղ խոսքը փաստացի հեղինակային իրավունքից բխող ֆինանսական «օգուտի»՝ նյութական բաղադրիչի մասին է: Գիտական աշխատանքներում ներգրավված հետազոտողի մտավոր սեփականության իրավունքը կարող է ենթարկվել որոշ սահմանափակումների՝ պայմանավորված տարբեր գործոններով, ինչպիսիք են՝ հետազոտողի աշխատանքային պայմանագիրը, ֆինանսավորող կազմակերպության քաղաքականությունը կամ ինստիտուցիոնալ կանոնակարգերը: Շատ դեպքերում հետազոտության արդյունքների հետ կապված մտավոր սեփականության իրավունքները կարող են պատկանել (մասնակի կամ ամբողջովին) հետազոտողի գործատու հաստատությանը կամ ֆինանսավորող (դրամաշնորհ հատկացնող) կառույցին՝ համաձայն կնքված աշխատանքային կամ դրամաշնորհային պայմանագրերի: Այս միջոցները ձեռնարկվում են կազմակերպության կամ հովանավորի շահերը պաշտպանելու, ինչպես նաև իրավական ու էթիկական նորմերը պահպանելու նպատակով: Հետազոտողները պետք է քաջատեղյակ լինեն առկա սահմանափակումներին և գործեն՝ հաշվի առնելով սահմանված կարգերի կամ կնքված պայմանագրերի պահանջները, և գիտակցեն, որ դրանք կարող են էապես ազդել իրենց մտավոր սեփականության պաշտպանության և ստացված արդյունքների առևտրայնացման վրա:

b. Մտավոր սեփականություն

Մտավոր սեփականության իրավունքն սահմանված է օրենսդրությամբ, որն առաջ է գալիս արդյունաբերական, գիտական, գրական և գեղարվեստական ոլորտներում մտավոր գործունեության արդյունքում:

Մտավոր սեփականությունը մարդու մտքի ոչ նյութական ստեղծագործությունն է, որը սովորաբար արտահայտվում կամ դրսևորվում է շոշափելի ձևով, որին վերապահված են սեփականության որոշակի իրավունքներ:

Մտավոր սեփականության իրավունքները կարող են սահմանվել որպես իրավունքներ, որոնք տրված են մարդկանց իրենց սեփական մտքի համար: Սեփականության իրավունքները սովորաբար ստեղծագործողին տալիս են բացառիկ իրավունք՝ որոշակի ժամկետով օգտագործելու իրենց իսկ հեղինակային ստեղծագործությունները:

Մտավոր սեփականությունը վերաբերում է սեփական մտքի արգասիքներին՝ գյուտերին, գրական և գեղարվեստական ստեղծագործություններին և առևտրում օգտագործվող ապրանքանիշներին, անուններին, պատկերներին և ձևերին:

«Մտավոր սեփականության իրավունք» եզրույթն օգտագործվում է տարբեր իրավական հարթակներում, որոնք կցվում են որոշակի տեսակի տեղեկատվության, գաղափարների կամ այլ ոչ նյութական արժեքների:

Մտավոր սեփականության իրավունքի օրինական սեփականատերը, ընդհանուր առմամբ, իրավունք ունի օգտվելու մտավոր սեփականության առարկայի հետ կապված տարբեր բացառիկ իրավունքներից (ECCRI, 2017; ՀՀ օրենքը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին, 2006. Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հեղինակային իրավունքի պայմանագիր, 1996 և այլն):

c. Խարդախություն

Հիմնականում խարդախության երկու տեսակ է դիտարկվում հետազոտական որոշ աշխատանքների իրականացման ընթացքում՝ կեղծում և հորինում:

Կեղծումը, որպես այդպիսին, վերաբերում է ստացված տվյալների փոփոխմանը (մասնակի փոփոխմանը) կամ այլ հեղինակների կողմից կատարված հետազոտության արդյունքների խեղաթյուրմանը և ներկայացմանը: Կեղծման արդյունքում ներկայացվում են սխալ, մտացածին, փոփոխված, իրականում գոյություն չունեցող հետազոտության արդյունքներ (Martyn, 2003):

Տվյալների կեղծումը մանիպուլյատիվ գործողություն է, որի նպատակն է իրականացված ուսումնասիրության մասին այլ, իրականությանը չհամապատասխանող, սակայն աշխատանքի գիտական արժեքը բարձրացնող տպավորություն թողնել: Այն կարող է ներառել ստացված պատկերների փոփոխություններ, տվյալների կետերի ավելացում կամ նվազեցում, ինչպես նաև բարեվարքության կանոններին ոչ հարիր այլ գործողություններ (Kang & Hwang, 2020):

Հորինումը վերաբերում է չիրականացված հետազոտության արդյունքների և տվյալների ձևավորմանը և դրանց ներկայացմանը որպես իրականություն: Դա կարող է տեղի ունենալ, երբ հետազոտողը, օրինակ, նշում է, որ որոշակի լաբորատոր գործընթաց է իրականացվել, սակայն, ըստ էության, դա չի իրականացվել, կամ հետազոտությունն որպես այդպիսին առհասարակ չի կայացել, այլ նախկինում կատարված նմանատիպ հետազոտության արդյունքները պատճենվել և հրապարակվել են որպես բնօրինակ հետազոտություն:

d. Գրագողություն

Գրագողությունը ակադեմիական բարեվարքության կոպիտ խախտում է: «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի (2006) 65րդ հոդվածի համաձայն՝ գրագողություն է համարվում ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելը և առանց դրանց ստեղծագործական վերամշակման կամ ձեռքբերման սկզբնաղբյուրը նշելը՝ ամբողջ ստեղծագործությունը կամ դրա մասը որպես իրենը ներկայացնելը (Գրագողության դեպքերի վերհանման և կանխարգելման ուղենիշները տե՛ս 1ին հավելվածում):

- Ուրիշի ստեղծագործություն ասելով՝ հասկանում ենք յուրաքանչյուր հրապարակված և չհրապարակված նյութ՝ գրավոր (ձեռագիր, տպագիր կամ էլեկտրոնային/առցանց) կամ բանավոր, վիզուալ (տեսանյութ, նկար, գծապատկեր) կամ վերբալ (ձայնագրություն) ձևաչափով, որում միանշանակորեն երևում են հեղինակային տվյալները և հրատարակման/հրապարակման ժամանա-կագրությունը:
- Ուրիշի ստեղծագործության յուրացումը և առանց պատշաճ հղումների օգտագործումը համարվում է գրագո-

ղություն՝ անկախ սկզբնաղբյուրի հեղինակների և (կամ) սեփականատերերի կողմից նյութի՝ որպես սեփական ներկայացնելուն տրված համաձայնությունից: Որպես մասնավոր դրսևորում կարող է դիտարկվել այլ հեղինակների գրած ստեղծագործությունները գնելը և որպես սեփական ներկայացնելը:

Ինքնագրագողությունը գրագողության տարատեսակ է, որը ենթադրում է առանց ստեղծագործական վերամշակման և առանց սկզբնաղբյուրի նշման նախկինում հրատարակված սեփական ստեղծագործությունների, դրանցում ներկայացված մտքերի, հատվածների կրկնակի, բազմակի, զուգահեռ վերահրատարակություն (https://www.bok.am/node/11852):

e. Համատեղ աշխատանք (հեղինակ, համահեղինակ)

Համատեղ աշխատանքը կամ համագործակցությունն իրենից ներկայացնում է անձանց միասնական աշխատանք՝ հանուն ընդհանուր նպատակի և շահի: Համագործակցության պարզ սահմանումը ենթադրում է՝

- երկու կամ ավելի մարդ (խումբ).
- համատեղ աշխատանք (գործընթաց).
- ընդհանուր նպատակ (նպատակահենք):

Համագործակցությունը հիմնված է թափանցիկության, ազնվության և գիտելիքների փոխանակման վրա, ինչպես նաև հետազոտողների կողմից թեմայի շրջանակներում կենտրոնացվածության և հաշվետվողականության որոշակի մակարդակի վրա:

Ո՞վ է հեղինակը, համահեղինակը և ներդրողը.

Հեղինակը

- *Առաջարկում է հետազոտության թեման և վերնագիրը:*
- *Պատասխանատու է հետազոտության ողջ գործընթացի համար:*
- *Իրականացնում է հետազոտության հետ կապված հիմնական աշխատանքները:*
- *Սևագրում, վերանայում, խմբագրում և վերջնականացնում է մտավոր սեփականությունը:*

- *Հաստատում է գիտական հոդվածի/աշխատության վերջնական տարբերակը:*
- *Հաշվետու է հետազոտության բովանդակության համար:*
- *Համաձայնեցնում է հոդվածի տպագրության հետ կապված բոլոր հարցերը:*
- *Պատասխանատու է բոլոր համահեղինակների կարծիքների, փոփոխությունների և խմբագրական փոփոխությունների ընդունման կամ մերժման համար:*

<u>Համահեղինակը</u>

- *Կարող է մասնակցել հետազոտության թեմայի ձևակերպման գործընթացին:*
- *Հաշվետու է հետազոտության բովանդակության համար:*
- *Գիտական հոդվածի/աշխատության մեջ ունի զգալի ներդրում:*
- *Հեղինակի հետ մեկտեղ կարող է հավասարաչափ պատասխանատվություն կրել հոդվածի տպագրության հետ կապված բոլոր հարցերում:*
- *Բոլոր հեղինակները պետք է հստակ կարողանան տարանջատել համահեղինակի աշխատանքը և պարտականությունները:*

<u>Ներդրողը</u>

- *Չի դիտարկվում որպես հեղինակ կամ համահեղինակ:*
- *Օգնում է ֆինանսավորում գտնել, ղեկավարել հետազոտական թիմը:*
- *Կարող է տրամադրել վարչական աջակցություն, տեխնիկական գրագրություն, խմբագրում, սրբագրում և այլն:*

4. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական գործունեությունը անքակտելիորեն կապված է այն միջավայրի հետ, որտեղ այն ծավալվում է, և օպտիմալ հետազոտական միջավայրի առկայությունը արդյունավետ գործունեության անհրաժեշտ նախապայման է: Բացի անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական միջոցներից, հետազոտական բարենպաստ միջավայրը պահանջում է ակադեմիական ազնվության անհրաժեշտ չափանիշների ապահովում և հետազոտողների պատրաստակամությունը՝ հավատարիմ մնալու և զարգացնելու պատասխանատու վարքագծի մշակույթը: Նման միջավայրի ստեղծումը ենթադրում է ներքին քաղաքականության և ընթացակարգերի մշակում և իրականացում, որոնք հատուկ կարևորում և խրախուսում են ակադեմիական բարեվարքությունը:

Հարկ է նշել, որ հետազոտական միջավայրը զարգանում և պահպանվում է ավագ և կրտսեր հետազոտողների միջև դինամիկ փոխազդեցության շնորհիվ, ինչը պահանջում է էթիկական մշակույթի փոխանցում կանոնավոր դասընթացների և մենթորական աշխատանքի միջոցով (Վերմիշյան, Սմբատյան, Բաբայան, Միչիկյան, 2021):

Պատշաճ հետազոտական միջավայրը հիմնված է գրախոսության կամ փորձագիտական գնահատման հուսալի մեխանիզմների և կոլեգիալ համագործակցության վրա: Պատշաճ էթիկական չափանիշներին համապատասխան իրականացված գրախոսության, գնահատման և խմբագրման աշխատանքները առանցքային նշանակություն ունեն հետազոտական համայնքի առաջընթացի համար: Այս համատեքստում կենտրոնական տեղ է զբաղեցնում շահերի բախման չեզոքացումը, որը ծառայում է որպես անփոխարինելի գործիք հետազոտական գործընթացում բարեվարքությունը պահպանելու համար:

Հետազոտության բարեվարքության բարձր չափանիշների պահպանումը ենթադրում է նաև ապահովել հետազոտության տվյալների հուսալի պահպանում՝ միջազգայնորեն ճանաչված FAIR սկզբունքների համապատասխան: Սոցիալական պատասխանատվությունը և անվտանգության երաշխիքների ապահովումը հանդես են գալիս որպես պատշաճ հետազոտական միջավայրի առկայությունը ապահովող կարևորագույն տարրեր:

a. Գիտահետազոտական միջավայրը

Հետազոտական հաստատությունները և կազմակերպությունները պետք է նպաստեն ակադեմիական բարեվարքության մշակույթի կայացմանն ու տարածմանը, ինչպես նաև ապահովեն համապատասխան խնդիրների առնչությամբ ակադեմիական համայնքի իրազեկվածության անհրաժեշտ մակարդակ:

Հետազոտական հաստատությունները և կազմակերպությունները պարտավոր են ունենալ հստակ քաղաքականություն և գործնական ընթացակարգեր, որոնք կերաշխավորեն իրականացվող հետազոտական աշխատանքների թափանցիկությունը և հնարավոր խախտումների պատշաճ արձանագրումը և դրանց առնչությամբ համապատասխան արձագանքը:

Հետազոտական հաստատությունները և կազմակերպությունները պետք է հնարավորության սահմաններում ապահովեն իրականացվող հետազոտությունների արդյունքների վերարտադրման, հետագծելիության և հաշվետվողականության ապահովման համար անհրաժեշտ տվյալների և հետազոտական նյութերի (որակական և քանակական տվյալներ, արձանագրություններ, հետազոտական այլ հավաստագրեր և հարակից մետատվյալներ, փորձանմուշներ և այլն) կառավարման և պաշտպանության համապատասխան ենթակառուցվածքների առկայությունը:

Հետազոտական հաստատությունները և կազմակերպությունները պետք է ներդնեն հետազոտողների աշխատանքի ընդունման և առաջխաղացման բաց, թափանցիկ, հրապարակային և կանխատեսելի գործընթաց:

b. Ուսուցում, ղեկավարում և ուղղորդում / Training, Supervision and Mentoring

Հետազոտական հաստատությունները և կազմակերպությունները ապահովում են հետազոտողների պարբերաբար վերապատրաստման գործընթացը՝ նպաստելով նրանց կողմից հետազոտությունների նախագծման, իրականացման և կիրառվող մեթոդաբանության վերաբերյալ պատշաճ գիտելիքների և հմտությունների ձևավորմանը:

Հետազոտական հաստատությունները և կազմակերպություններն իրականացնում են հետազոտական (ակադեմիական) բարեվարքության տարբեր խնդիրների վերաբերյալ հետազո-

տական աշխատանքներում ներգրավված անձանց վերապատրաստումներ՝ ապահովելով բոլոր շահակիցների պատշաճ իրազեկումը համապատասխան օրենսգրքերի, կանոնակարգերի և ընթացակարգերի վերաբերյալ:

Ավագ հետազոտողները կամ հետազոտական աշխատանքի ղեկավարները համակարգում են իրենց գիտական խմբի անդամների գործունեությունը՝ ուսուցանելով և տրամադրելով հստակ ուղղորդում հետազոտական գործունեությունը ճիշտ նախագծելու, զարգացնելու, կառուցվածքային դարձնելու և հետազոտական բարեվարքության մշակույթը խթանելու նպատակով:

c. Գրախոսություն, գնահատում և խմբագրում / Reviewing, Evaluating and Editing

Հետազոտողները պետք է լրջորեն գիտակցեն իրենց մասնագիտական պատասխանատվությունը գիտական համայնքի առջև և պարբերաբար մասնակցեն գրախոսության, եզրակացությունների տրամադրման, խմբագրման և գնահատման գործընթացներին:

Գրախոսությունը նույն կամ հարակից ոլորտում աշխատող այլ անձանց կողմից կատարվող հետազոտության անաչառ և անկախ գնահատումն է:

Գրախոսությունը հետազոտության արդյունքների գնահատման և համապատասխան գործընթացի կառավարման հարցում կարող է ունենալ մի շարք կարևոր կիրառություններ, մասնավորապես՝

- հետազոտական առաջարկների և դրամաշնորհային հայտերի գնահատում.
- նյութերի հրապարակման և տարածման համար իրականացվող գնահատում և ընտրություն,.
- բարձրագույն գիտական աստիճանաշնորհման համար (մագիստրոս, ասպիրանտ, դոկտորանտ) իրականացված հետազոտական աշխատանքի գնահատում. պետական մարմինների կողմից հետազոտության որակի, ներգրավվածության և ազդեցության աստիճանի, կարևորության, վերջնարդյունքի գնահատում.
- առանձին հետազոտողների, խմբերի, ակադեմիական միավորների և հաստատությունների կողմից իրականացված հետազոտության գնահատում:

Գրախոսությունն ապահովում է առաջարկվող հետազոտության կամ հետազոտական արդյունքների փորձագիտական վերահսկումը և նպաստում է հետազոտության որակի ապահովման, այդ թվում ընդունված կարգապահական չափանիշների կիրառման գործընթացին: Գրախոսությունը կոչված է ապահովելու հետազոտության ճշգրիտ, մանրակրկիտ և վստահելի հաշվետվողականությունը:

Գրախոսությունը կարող է նաև ուշադրություն հրավիրել օրենսդրական կարգավորումների հնարավոր շեղումների վրա, այդ թվում՝ բացահայտելով գրագողության, կրկնվող հրապարակման, սխալների և ապակողմնորոշող հայտարարությունների դեպքերը:

Գրախոսությունը չափազանց արդյունավետ և օգտակար է նաև հետազոտողի (որի աշխատանքը գրախոսվում է) համար: Հետազոտողն իրազեկվում է ոլորտի նորագույն հետազոտությունների մասին, զարգացնում է քննադատական վերլուծության հմտությունները, հասկանում և պատկերացնում է գրախոսության սկզբունքները, մոտեցումները, գործընթացները, աշխատանքի ծավալը (Գրախոսության ձևաթղթի օրինակը ներկայացված է 2-րդ հավելվածում):

Շահերի բախում ունեցող գրախոսները կամ խմբագիրները պետք է հրաժարվեն հրապարակման, ֆինանսավորման, աշխատանքի նշանակման, առաջխաղացման կամ պարգևատրման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներին (գրախոսությանը) մասնակցելուց:

Գրախոսները պահպանում են գաղտնիությունը, քանի դեռ հրապարակային գրախոսության նախնական հաստատում չկա:

Գրախոսները և խմբագիրները հարգում են հեղինակների և հայցորդների իրավունքները, ուստի պարտավոր են թույլտվություն հայցել՝ օգտագործելու ներկայացված գաղափարները, տվյալները և (կամ) մեկնաբանությունները:

d. Անվտանգություն / Safeguards

Հետազոտողները պետք է պահպանեն կարգապահական կանոնները և հստակ հետևեն համապատասխան օրենսդրական և կանոնակարգային պահանջներին:

Հետազոտողները պետք է իրականացնեն իրենց թեմայից բխող հետազոտությունները ամենայն հարգանքով և հոգատարությամբ, իրավական և բարեվարքության դրույթներին համապատասխան, անկախ այն փաստից, թե հետազոտության առարկան կամ օբյեկտը մարդն է, կենդանին, մշակութային տիրույթը և (կամ) հուշարձանը, կենսաբանական, բնապահպանական, ֆիզիկական այլ առարկաները և (կամ) երևույթները:

Հետազոտողները պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն հետազոտության մասնակիցների, համագործակցողների/գործընկերների և իրենց հետազոտության հետ կապված այլ անձանց առողջությանը, անվտանգությանը և բարեկեցությանը:

Հետազոտության շրջանակներում կատարված արձանագրությունները պետք է հաշվի առնեն տարիքային, սեռային, մշակութային, կրոնական, էթնիկական ծագման և սոցիալական դասի համապատասխան տարբերությունները:

Հետազոտողները պետք է գիտակցեն և կառավարեն իրենց կողմից իրականացվող հետազոտության հետ կապված հնարավոր վնասներն ու ռիսկերը:

e. Տվյալների հավաքագրում, պահպանում և կառավարում

Հետազոտողները, հետազոտական հաստատությունները և կազմակերպությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ողջամիտ ժամկետով հետազոտությունների բոլոր տվյալների և հետազոտական նյութերի, ներառյալ՝ չհրապարակվածների, պատշաճ կառավարումը և անվտանգ պահպանումը իրականացնելու նպատակով:

Առաջնային նյութը ցանկացած բնույթի նյութ է (օրինակ՝ կենսաբանական նյութ/նմուշ, նշումներ, հարցազրույցներ, տեքստեր և գրականություն, թվային սկզբնական տվյալներ, ձայնագրություններ և այլն), որը կազմում է հետազոտության հիմքը՝ հետազոտվող առարկան/օբյեկտը:

Տվյալներն առաջնային նյութերի մշակման հետ կապված մանրամասն գրառումներ են, որոնք վերլուծության և հետագա հետազոտական արդյունքների արձանագրման հիմք են:

Հետազոտողները, հետազոտական հաստատությունները և կազմակերպությունները պետք է ապահովեն տվյալների հասանելիու-

թյունը անհրաժեշտության դեպքում՝ բաց կամ փակ, տվյալների կառավարման համար «ՈՒՖՓՎ» (FAIR[3]) սկզբունքներին համապատասխան (որոնելի, հասանելի, փոխգործուն և վերաօգտագործելի):

Հետազոտողները, հետազոտական հաստատությունները և կազմակերպությունները պետք է ապահովեն թափանցիկություն իրենց տվյալների և հետազոտական նյութերի հասանելիության կամ օգտագործման վերաբերյալ:

Հետազոտողները, հետազոտական հաստատությունները և կազմակերպությունները պետք է տվյալները ճանաչեն և ընդունեն որպես հետազոտության օրինական և վկայակոչվող հիմք:

Հետազոտողները, հետազոտական հաստատությունները և կազմակերպությունները պետք է երաշխավորեն, որ հետազոտության արդյունքների հետ կապված ցանկացած պայմանագրեր կամ համաձայնագրեր ներառում են հստակ դրույթներ վերջիններիս օգտագործման, սեփականության և (կամ) մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև այդ ողջ գործընթացի պաշտպանության իրականացման համար:

f. Շահերի բախում / Conflict of interest

Շահերի բախումը ծագում է այնպիսի իրավիճակում, երբ անկախ դիտորդը հիմնավորում է, որ անձի մասնագիտական գործողությունները կարող են պոտենցիալ ենթակա լինել կողմնակալ մոտեցման կամ բխել տարատեսակ շահերից: Շահերի բախման առկայությունը լուրջ խնդիր է և կարող է մտահոգություն առաջացնել ներգրավված անձանց անաչառության կամ հաստատության կառավարմանն առնչվող հարցերում՝ կասկածի տակ դնելով համայնքի վստահությունը հետազոտությունների նկատմամբ:

Որոշ ակադեմիական և մասնագիտական համայնքներում՝ կախված բնագավառից, հետազոտական ոլորտում փորձագիտական խումբը կարող է այնքան սահմանափակ լինել, որ բոլոր համապատասխան որակավորում ունեցող անձինք, որոնց հետազոտողը կարող է դիմել մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով, որևէ կերպով առնչվում են հետազոտական ծրագրի կամ հարակից նախագծերի մշակմանը,

[3] FAIR: findability, accessibility, interoperability, and reusability. https://www.go-fair.org/fair-principles/

դրամաշնորհային նախագծերի ֆինանսական հարցերի կազմակերպմանը: Արդյոք այս բոլոր հանգամանքները կարո՞ղ են հանգել շահերի բախման, թե՞ ոչ՝ որոշում է համապատասխան մարմինը (օրինակ՝ լիազորված ինստիտուցիոնալ պաշտոնյան, փորձագիտական հանձնաժողովը, կոմիտեի նախագահը կամ կոմիտեն): Որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բազմակի կամ տարատեսակ շահերի առկայությունը միշտ չէ, որ բերում է շահերի բախման:

Շահերի բախումն ինքնին չի ենթադրում պատճառաբանված մոտեցման կամ որոշակի մասնագիտական շահագրգռվածության պակաս կամ կողմնակալ վերաբերմունք հետազոտողի կողմից: Այնուամենայնիվ, կարևոր է, որ ցանկացած շահերի բախում պատշաճ կերպով բացահայտվի և լինի կառավարելի (հնարավորինս չեզոքացվի): Այն բանից հետո, երբ անձը բացահայտում է իր շահերը, համապատասխան որոշում կայացնողը (լիազորված ինստիտուցիոնալ պաշտոնյան, կոմիտեի նախագահը կամ կոմիտեն) պետք է որոշի՝ արդյոք այդ հանգամանքները կարո՞ղ են բերել շահերի բախման և կողմնակալ գնահատման, թե՞ ոչ:

Եթե առկա է շահերի բախում, համապատասխան մարմինը պետք է որոշի, թե ո՛ր միջոցներն են առավել նպատակահարմար այդ շահերի բախումը չեզոքացնելու և գործընթացը ճիշտ կառավարելու համար: Այդ միջոցները պետք է հաշվի առնեն անհատական հանգամանքները և կարող են ներառել հետևյալը.

- շահերի հրապարակային բացահայտման պահանջ, օրինակ՝ հետազոտությունը ներկայացնելիս կամ հրապարակելիս.
- համապատասխան անձի լրացուցիչ ներգրավում, որը վերահսկելու է հետազոտական գործունեության մի մասը կամ ամբողջ գործընթացը.
- պահանջ հետազոտողին՝ ներկայացնելու համապատասխան անձին/անձանց, որոնք կարող են շահերի բախում ունենալ հետազոտության հետ կապված ցանկացած խորհրդակցական որոշումների կայացման գործընթացում.
- պահանջ հետազոտողին այլ կամ ավելի փոքր դերակատարում ունենալ հետազոտության ընդհանուր համատեքստի մի որևէ մասում կամ ողջ ընթացքում.

- պահանջ հետազոտողին՝ հրաժարվել ֆինանսական կամ այլ շահերից:

Պարզաբանում/բացահայտում պահանջող ֆինանսական շահերը ներառում են ստորև նշված կետերը, սակայն դրանցով չեն սահմանափակվում.

- ուղղակի վճարումներ հետազոտողին, ինչպիսիք են՝ աշխատավարձը, տրամադրված խորհրդատվության կամ ելույթի/դասախոսության, անդամակցության համար վճարները և այլն.
- անուղղակի վճարումներ հետազոտողին, օրինակ՝ ճանապարհորդության, կեցության, մասնագիտական զարգացման, հյուրընկալման նպատակով.
- հետազոտություններին աջակցելու վճարումներ, ինչպիսիք են՝ ոլորտի կամ շահագրգիռ խմբի ֆինանսավորումը.
- ընկերության բաժնետոմսեր.
- պարգևավճարներ.
- որոշ կրթաթոշակներ.
- գործառնական կամ ենթակառուցվածքային աջակցություն:

Պարզաբանումներ/բացահայտումներ կարող են պահանջվել նաև այն դեպքում, երբ վերը թվարկված ֆինանսական շահի որևէ տեսակ վերաբերում է հետազոտողի անմիջական ընտանիքի անդամին: Ֆինանսական շահերը դիտարկվում են նաև այն դեպքում, երբ ապագայում կա օգուտի ակնկալիք, օրինակ՝ մտավոր սեփականության վաճառքից ստացված եկամուտները, որոնք բխում են նախագծից կամ բաժնետոմսերից:

Ֆինանսական շահերին անդրադառնալիս հետազոտողները և հաստատությունները պետք է հաշվի առնեն ֆինանսական շահերի նշանակությունը, ներառյալ՝

- վճարման, նվերի կամ տոկոսների դրամական արժեքը.
- այն նշանակությունը, որն անկախ իրատես դիտորդը կարող է տալ վճարմանը, նվերին կամ տոկոսին.
- այն հանգամանքները, որոնց դեպքում կատարվում է վճարում, կամ տրվում է նվեր, օրինակ՝ եթե նվերը կամ վճարումը կատարված է միանվագ (չի կրում պարբերական բնույթ):

Ոչ ֆինանսական շահերը, որոնք պահանջում են պարզաբանում/բացահայտում, ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- խորհրդի անդամություն (նույնիսկ անվճար հիմունքներով) կամ այլ կապ կազմակերպության հետ, որը կարող է օգուտ քաղել կամ ազդել հետազոտության վրա.
- անձնական կամ սոցիալական հարաբերություններ, ներկայում և անցյալում առկա մասնագիտական հարաբերություններ.
- առկա զբաղվածություն կամ դերակատարում այն կազմակերպություններում, որոնք ունեն ֆինանսական կապեր կամ փոխկապակցված են արդյունաբերական այնպիսի խմբերի հետ, որոնք կարող են ունենալ համատեղ շահ կամ ազդել հետազոտության կատարման / ընթացքի / արդյունքի վրա:

g. Հրապարակում և տարածում / Publication and Dissemination

Հրապարակումը հետազոտությունների և դրանց արդյունքների մասին գիտականմասնագիտական հանրությանը իրազեկելու գործընթաց է, որը կարող է իրականացվել տարաբնույթ հարթակներում՝ պարբերականներում, ամսագրերում, գիտաժողովների նյութերի ժողովածուներում, գրքերում կամ այլ ակադեմիական լրատվամիջոցներում՝ հոդվածների, զեկույցների, հիմնադրույթների, մենագրությունների և այլ հրապարակումների միջոցով:

Տարածումը (իրազեկումը) զանգվածային լրատվամիջոցների միջոցով հասարակությանը տեղեկատվության փոխանցման ընդհանրական հասկացությունն է:

Նախքան հրապարակումը բոլոր հեղինակները պատասխանատվություն են կրում հրապարակման բովանդակության համար, եթե ուրիշ փաստաթղթերով որևէ այլ ընթացակարգեր նախատեսված չեն:

Նախքան հրապարակումը բոլոր հեղինակները համաձայնություն են ձեռք բերում հեղինակների անվանացանկի հաջորդականության վերաբերյալ՝ ընդունելով, որ հեղինակների ցանկը ինքնին ձևավորված է հետազոտության նախագծման, համապատասխան տվյալների հավաքագրման, արդյունքների վերլու-

ծության, մեկնաբանման և ձևակերպման մեջ բոլոր հեղինակների նշանակալի ներդրման պարագայում:

Հեղինակները երաշխավորում են, որ իրենց աշխատանքը տպագրությունից հետո հասանելի է (ազատ հասանելիության բացակայության պարագայում՝ ըստ պահանջի) ոլորտի մասնագետներին և գիտական հանրությանը (ժամանակին, բաց, թափանցիկ և ճշգրիտ), եթե հրատարակչի հետ այլ բան համաձայնեցված չէ (ինչպես գիտական հոդվածների, այնպես էլ գիտահանրամատչելի նյութերի տեսքով):

Հեղինակները պարտավոր են համապատասխան ձևով շնորհակալություն հայտնել այն անձանց և (կամ) կառույցներին, որոնք որևէ ներդրում են ունեցել իրենց աշխատանքում, նշանակալի գիտական, գիտամեթոդական, մտավոր և (կամ) տեխնիկական աջակցություն ցուցաբերած անձանց, ֆինանսավորում հատկացնող կազմակերպություններին:

Հրատարակիչների սահմանած ընթացակարգով նախատեսված պարագայում հեղինակները պետք է ներկայացնեն շահերի և/կամ ֆինանսական ցանկացած հնարավոր բախման վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվություն հետազոտության կամ դրա արդյունքների հրապարակման համար:

Գրախոսները և հրատարակիչները, անհրաժեշտության դեպքում, կատարում են համապատասխան ուղղումներ կամ հիմնավոր պատճառաբանությամբ ներկայացնում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ, որից հետո հեղինակներին տրվում է ողջամիտ ժամկետ պահանջող փոփոխությունները կատարելու համար, այնուհետև լրամշակված տարբերակը ենթարկվում է կրկնակի փորձաքննության:

Հետազոտական աշխատանքների արդյունքների հրապարակման և տարածման համար հետազոտության բացասական արդյունքները նույնքան վավեր են, որքան դրական արդյունքները:

h. Հասարակական նկատառումներ / Social considerations

Գիտահետազոտական համայնքը պետք է կազմի հասարակության մի մաս, այլ ոչ թե հանդես գա նրանից առանձին:

Հետազոտողների հանրային պատասխանատվությունն ի հայտ է գալիս ոչ միայն այն պատճառով, որ հետազոտությունները հա-

ճախ ֆինանսավորվում են (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) հանրային միջոցների հաշվին, այլև այն պատճառով, որ հետազոտությունն իրականացվում է հասարակության անունից՝ որպես հասարակության կարիքների, շահերի, առաջնահերթությունների և ակնկալվող ազդեցությունների արտահայտում և արտացոլում: Հետազոտողները պարտավոր են թափանցիկ կերպով ներկայացնել իրենց արդյունքները, շփվել հասարակության հետ և հաշվի առնել իրենց աշխատանքի ավելի լայն սոցիալական հետևանքները՝ ամրապնդելով վստահելի հարաբերություններ և ապահովելով հետազոտության օգուտների համընդհանուր բաշխում:

Իր հետազոտական գործունեության ընթացքում հետազոտողը պետք է հաշվի առնի հանրային բարոյական, սոցիալական, տնտեսական, բնապահպանական, անվտանգային և այլ հետևանքները:

Հատուկ գիտելիքների առկայության շնորհիվ հետազոտողները կարող են էականորեն նպաստել գիտության և տեխնոլոգիայի հանրային ըմբռնմանը և դրանով իսկ խթանել ժողովրդավարական հասարակության զարգացումը՝ նպաստելով իրազեկ քաղաքացու և հասարակության ձևավորմանը:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

A guide supporting the Australian Code for the Responsible Conduct of Research (hereinafter – ACRCR) (2018), available at: https://www.nhmrc.gov.au/aboutus/publications/australiancoderesponsibleconductresearch2018#download

Babbie, E. R. (2013). The practice of social research (Thirteenth edition). Wadsworth Cengage Learning.

Code of Conduct for Responsible Research (hereinafter – CCRR), University of Copenhagen, available at: https://research.ku.dk/integrity/documents/code_of_conduct_for_responsible_research__2018_.pdf

Good Research Practice (hereinafter – GRP), Sweden, available at: https://www.vr.se/english/analysis/reports/ourreports/20170831goodresearchpractice.html

KANG, E., & HWANG, H. (2020). The Consequences of Data Fabrication and Falsification among Researchers, Journal of Research and Publication Ethics Vol 1 No 2, 710.

Martyn, C. (2003). Fabrication, falsification, and plagiarism. An International Journal of Medicine, 96(4), 243–244.

The Danish Code of Conduct for Research Integrity (hereinafter – DCCRI), available at: https://ufm.dk/publikationer/2014/filer2014/thedanishcodeofconductforresearchintegrity.pdf

The European Code of Conduct for Research Intregrity (hereinafter – ECCRI). (2017). ALLEA All European Academies. https://www.allea.org/wpcontent/uploads/2017/05/ALLEAEuropeanCodeofConductforResearchIntegrity2017.pdf

Գրագողության դեպքերի վերհանման և կանխարգելման ուղենիշներ (ԳԴՎԿՈՒ), ԲՈԿի կայք, https://www.bok.am/node/11852

ՀՀ օրենքը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին, (2006); https://www.arlis.am/documentview.aspx?docID=25161

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հեղինակային իրավունքի պայմանագիր, 1996

Վերմիշյան Հ., Սմբատյան Հ., Բաբայան Լ., & Միչիկյան Ս. (Eds.). (2021). Սոցիալական հետազոտության էթիկական ուղենիշներ. կիրառական ուղեցույց. ՀարտՊրինտ. https://socies.am/wpcontent/uploads/2021/09/Ethicalguidelines.pdf

Հավելված 1
Գրագողության դեպքերի վերհանման և կանխարգելման ուղենիշներ

(ԳԴՎԿՈՒ՝ https://www.bok.am/node/11852)

I. Գրագողության դեպքերը

1. Այլ հեղինակի/ների աշխատանքից մտքերի, հատվածների ամբողջական կամ մասնակի յուրացումը և բառացիորեն որպես սեփական աշխատանք ներկայացնելը:
2. Այլ հեղինակի/ների աշխատանքից մտքերի, հատվածների վերատպումը և (կամ) վերաձևակերպման, շրջասության միջոցով առանց պատշաճ հղումների վերաշարադրումը:
   2.1. Այլ հեղինակի/ների ստեղծագործությունից որոշ հատված/ների կառուցվածքը պահելով՝ բառափոխման միջոցով առանց պատշաճ հղումների վերաշարադրումը:
   2.2. Մի քանի ստեղծագործություններից մտքերի, գաղափարների և (կամ) փաստարկների փոխառությունն ու բառափոխման, շրջասության միջոցով առանց պատշաճ հղումների վերաշարադրումը:
3. Այլ հեղինակի/ների աշխատանքից մտքերի, հատվածների բնագիր լեզվից տարբեր լեզվով հրատարակումը և (կամ) ներկայացումը՝ առանց բնագրին պատշաճ հղում/ների:
4. Այլ հեղինակի/ների աշխատանքից մտքերին, հատվածներին տրված ոչ պատշաճ հղումները: Առավել մասնավոր օրինակներ կարող են լինել 13.2 13.4 ենթակետերին չհամապատասխանող դեպքերը:

II. Ինքնագրագողության դեպքերը

5. Սեփական հետազոտության վերնագրի ամբողջական և/կամ մասնակի փոփոխությամբ՝ ստեղծագործության նույնությամբ վերահրատարակումը:
6. Սեփական հետազոտության բովանդակության բառափոխման, շրջասության միջոցով վերաշարադրումը և վերահրատարակումը:
7. Սեփական հետազոտության զուգահեռ/միաժամանակյա նույնությամբ կամ որոշակի փոփոխություններով վերահրատարակումը:

Առավել մասնավոր օրինակներ կարող են լինել՝

7.1. սեփական հետազոտության որոշ մասերի զուգահեռ/միաժամանակյա նույնությամբ կամ որոշակի նորույթ չհետապնդող փոփոխություններով վերահրատարակումը.

7.2. սեփական հետազոտության հրատարակումը, որը տարբերվում է հեղինակի մեկ այլ հրատարակումից փաստական նյութի՝ վերլուծական հատվածի փոփոխությամբ:

8. Սեփական հետազոտությունից մտքերի, հատվածների ուղղակի վերաշարադրումը կամ վերաշարադրումը բառափոխման, շրջասության միջոցով և դրա վերահրատարակումը՝ առանց սկզբնաղբյուրին պատշաճ հղում կատարելու:

III. Գրագողության/ինքնագրագողության դեպքերի կանխարգելումը

9. Գրագողության դեպքերից խուսափելու համար անհրաժեշտ է՝

9.1. Այլ հեղինակի/ների և (կամ) սեփական ստեղծագործություն/ներից մտքերի, հատվածների բառացի մեջբերումները ներկայացնել պատշաճ հղումներով:

Գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության դեպքում.

9.1.1. Նույն հատվածում և (կամ) պարբերության մեջ հեղինակի տեքստին ուղեկցող միևնույն աղբյուրից արվող ուղղակի և (կամ) բառացի մեջբերումը չպետք է գերազանցի 150 բառը (հումանիտար և հասարակագիտական ոլորտի հրապարակումների դեպքում ծավալը կարող է մեծանալ մինչև 300 բառ):

9.1.2. Ամբողջ ատենախոսությունում ուրիշ/ների ստեղծագործություն/ներից մտքերի, հատվածների բոլոր տեսակի մեջբերումները չպետք է գերազանցեն ներկայացված աշխատանքի 40 %ը (հումանիտար և հասարակագիտական ոլորտի հրապարակումների դեպքում ծավալը կարող է մեծանալ մինչև 50 %):

9.1.3. Անհրաժեշտության դեպքում առավել մեծ մեջբերվող մտքերը, գաղափարները, աղյուսակները, գծապատկերներն ու պատկերները ներառել հավելվածում՝ տալով համապատասխան հղում/ներ:

9.2. Ուրիշ/ների ստեղծագործություն/ներից մտքերի, հատվածների վերաձևակերպումը և (կամ) համակցումը ներկայացնել պատշաճ հղումներով՝ նշելով օգտագործված բոլոր աղբյուրները:

9.2.1. Բառափոխման, շրջասության միջոցով վերաշարադրման պատճառով ի հայտ եկող գրագողության խնդիրներից խուսափելու համար տեղին է ընդհանրացնել ուրիշի մտքերը, գաղափարները, փաստարկները սեփական բառերով և տալ համապատասխան հղումներ:

9.2.2. Եթե տեքստում առկա են միևնույն աղբյուրից մի քանի մեջբերումներ, ապա պետք է կա՛մ կրկին հղում կատարել, կա՛մ նշել, որ խոսքը միևնույն հեղինակի և (կամ) աղբյուրի մասին է:

9.3. Կատարել պատշաճ հղումներ՝ օգտվելով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ուղեցույց/ներից, որոնք տրամադրվում են գիտական թեմաները հաստատող կազմակերպություններին:

9.4. Բացառել սեփական ստեղծագործություն/ներից մտքերի, հատվածների կրկնակի, բազմակի կամ զուգահեռ ներկայացումը կամ կատարել պատշաճ հղումներ՝ օգտվելով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ուղեցույց/ներից: Բացառություն կարող են կազմել բուն գիտական արդյունքին չվերաբերող հատվածները՝ մեթոդների, նյութերի, սարքերի նկարագրություն և այլն:

10. Եթե հրատարակվող կամ հրապարակվող նյութի հիմքում ընկած են այլ անձանց, խմբերի, կազմակերպությունների ուղղակի գործունեության և (կամ) հետազոտությունների արդյունքները, ապա դա պետք է նշել աշխատանքում՝ շեշտելով յուրաքանչյուրի ներդրումը:

11. Ուրիշի կամ սեփական ստեղծագործություն/ներից մտքերի, հատվածների (նաև բնագիր լեզվից տարբեր լեզվով) կրկնակի, բազմակի կամ զուգահեռ հրատարակումը թույլատրելի է՝

11.1. անթոլոգիաների, քրեստոմատիաների և համանման հրատարակությունների դեպքում՝ հեղինակ/ների թույլտվության և (կամ) առաջնատիպ աղբյուր/ներին/սկզբնաղբյուրներին պատշաճ հղումների առկայության պայմանով.

11.2. ընթերցողների լայն հանրությանն առաջնային աղբյուրի/սկզբնաղբյուրի անհասանելիության դեպքում (բանավոր, թղթային, առցանց)՝ հեղինակ/ների թույլտվության

և (կամ) առաջնատիպ/սկզբնաղբյուր/ներին պատշաճ հղումների առկայության պայմանով:

IV. Գրագողության/ինքնագրագողության դեպքերի բացահայտումը և պատասխանատվությունը

12. Գրագողության/ինքնագրագողության դեպքերի բացահայտման նպատակով գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության, գիտական աստիճանի և (կամ) գիտական կոչման համար ներկայացվող հրատարակությունների էլեկտրոնային օրինակները անհրաժեշտության դեպքում կենթարկվեն գրագողության համակարգչային ստուգման: Համակարգչային ստուգման սահմանափակումների դեպքում գրագողության/ինքնագրագողության դեպքերի բացահայտումը կիրականացվի մարդկային ներուժի միջամտությամբ:
13. Գրագողությունը կարող է լինել որոշակի միտումների կամ անփութության հետևանք: Երկու դեպքում էլ սահմանվում են կարգապահական ընթացակարգեր:
    13.1. Գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության դեպքում:
        13.1.1. Ատենախոսությունը գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդ ներկայացնելուց մինչև ատենախոսության պաշտպանության նիստը ընկած ժամանակահատվածում ակադեմիական բարեվարքության պահպանման սույն ուղենիշներին չհամապատասխանող ատենախոսությունը ենթակա է վերադարձման:
        13.1.2. Ատենախոսության պաշտպանության նիստի ընթացքում ակադեմիական բարեվարքության պահպանման սույն ուղենիշներին անհամապատասխանությունների բացահայտման դեպքում մասնագիտական խորհրդի նիստը դադարեցվում է՝ լրացուցիչ պարզաբանումների նպատակով:
    13.2. Գիտական աստիճանի և (կամ) գիտական կոչման համար ներկայացվող հրատարակությունների դեպքում տվյալ հրատարակությունները համարվում են անվավեր, իսկ հեղինակի հանդեպ կարգապահական պատիժ կարող են սահմանել տվյալ հեղինակին ներկայացրած կազմակերպությունը, էթիկայի հանձնաժողովը և (կամ) գիտական խորհուրդը:

13.2.1. Գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող հրատարակություններում ակադեմիական բարեվարքության պահպանման սույն ուղենիշներին անհամապատասխանությունների բացահայտման դեպքում արդեն իսկ պաշտպանված ատենախոսությունը ենթակա է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդում կրկնակի քննարկման:

Հավելված 2

Թեզի, ատենախոսության/հետազոտական աշխատանքի գրախոսության ձևաթերթիկ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ/ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹԵՐԹԻԿ

(կրկնակի կույր վերանայման / քննարկման համար)

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսություն № «_____»

Ատենախոսության վերնագիրը
«_____»

ԳԻՏԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ՀԱՐՑԵՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1. ԻՍԿՈՒԹՅՈՒՆ Այս հարցերի դրական պատասխանները ներկայացնում են իսկության բարձր վարկանիշ, իսկ բացասական պատասխանները՝ իսկության ցածր վարկանիշ:	▪ Արդյոք ատենախոսությունում քննարկվող խնդիրը նորո՞ւյթ է:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք ատենախոսությունում նշվո՞ւմ է տարբերությունը այլ նմանատիպ ատենախոսություններից:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք ատենախոսությունը ներկայացնո՞ւմ է խոստումնալից գաղափար, թե՞ խթանում է ուրիշներին զարգացնել խոստումնալից այլընտրանքներ:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
2. ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ Այս հարցերի դրական պատասխանները	▪ Արդյոք ատենախոսությունն առաջարկո՞ւմ է քննարկված խնդիրների համոզիչ լուծում:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐

ներկայացնում են գիտական նշանակության բարձր վարկանիշ, իսկ բացասական պատասխանները՝ գիտական նշանակության ցածր վարկանիշ:	▪ Արդյոք ատենախոսությունը զգալի ներդրում ունի՞ հետազոտության տվյալ ոլորտում:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք ատենախոսությունը խթանո՞ւմ է կարևոր հարցերի կամ այլընտրանքային տեսակետների քննարկումը:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
3. ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Այս հարցերի դրական պատասխանները ներկայացնում են արդիականության բարձր վարկանիշ, իսկ բացասական պատասխանները՝ արդիականության ցածր վարկանիշ:	▪ Համապատասխանո՞ւմ է արդյոք հետազոտության փիլիսոփայությանը:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Համապատասխանո՞ւմ է արդյոք հետազոտության նպատակին:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք ատենախոսությունը համապատասխան տեղեկատվությո՞ւն է ներկայացնում իր հետազոտության ոլորտի համար:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
4. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ/ ՇԱՐԱԴՐԱՆՔ Այս հարցերի դրական պատասխանները ներկայացնում են աշխատանքի շարադրանքի բարձր վարկանիշ, իսկ բացասական պատասխանները՝ աշխատանքի շարադրանքի ցածր վարկանիշ:	▪ Արդյոք պահպանվա՞ծ է ատենախոսության տրամաբանական կառուցվածքը:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք ատենախոսությունը գրվա՞ծ է պարզ և հասկանալի:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք հոդվածը ճի՞շտ է գրված (ակադեմիական գրագրության տեսանկյունից):	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք ատենախոսությունը	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐

	պատշաճ կերպով ներկայացնո՞ւմ է իր ոլորտի եզրույթաբանությունը:	
5. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ Այս բաժնում գնահատման են ներկայացվում հինգ հիմնական կետեր, որոնք ստորև ներկայացված են: Այս հարցերի դրական պատասխանները ներկայացնում են բովանդակության բարձր վարկանիշ, իսկ բացասական պատասխանները՝ ցածր վարկանիշ:		
5.1 Վերնագիր	▪ Արդյոք վերնագիրը հստակ արտահայտո՞ւմ է ատենախոսության բովանդակությունը:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
5.2 Սեղմագիր	▪ Արդյոք սեղմագիրը բավականաչափ տեղեկատվակա՞ն է:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք սեղմագիրը անդրադառնո՞ւմ է հետազոտության արդյունքներին:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք սեղմագիրը լավ հեռանկա՞ր է տալիս ատենախոսության վերջնական ուղերձին:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
5.3 Ներածություն	▪ Արդյոք ներածությունը ճի՞շտ է ընդգծում ոլորտում առկա մարտահրավերները:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք ներածությունը հստակեցնո՞ւմ է հետազոտության նպատակները:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք ներածությունը հստակ ներկայացնո՞ւմ է ներդրումը հետազոտու-թյան ոլորտում:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐

5.4 Ամփոփում	▪ Արդյոք արդյունքները հստակ ներկայացվա՞ծ են:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք արդյունքները բավականաչափ զե՞րծ են ենթադրություններից և շահարկումներից:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք եզրակացությունները ճի՞շտ/տրամաբանակա՞ն են բացատրված:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք եզրակացությունները բավականաչափ զե՞րծ են սխալ մեկնաբանություններից:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք եզրակացությունները բավականաչափ զե՞րծ են ընդհանուր կամ կողմնակալ տեղեկատվությունից:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
5.5 Հղումներ	▪ Արդյոք հղումներն արտացոլո՞ւմ են դիտարկվող ոլորտի վերջին աշխատանքները/հետազոտությունները:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք հղումները ճի՞շտ են նշված հոդվածում:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
	▪ Արդյոք հղումները ճի՞շտ են ձևակերպված գրականության ցանկում:	1 2 3 4 5 ☐ ☐ ☐ ☐ ☐
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ		

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ
☐ Թույլ	☐ Մերժված (պահանջներին չի համապատասխանում)
☐ Ունի շտկումների կարիք	☐ Լրամշակման և փոփոխման ենթակա
☐ Միջին	☐ Ընդունված է նվազագույն փոփոխություններով
☐ Լավ	☐ Ընդունելի է

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ (ՆԵՐԻՆ)

Պաշտոնական գրախոս / (Ստորագրություն) / _____ (Անուն, ազգանուն)

Ամիս, ամսաթիվ

ՆՇՈՒՄՆԵՐ

ՆՇՈՒՄՆԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԵՎ ԵՄ ՓՈՐՁԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ» («ԱՐՄԴՈԿՏ») ԾՐԱԳԻՐ

ԳԻՏԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Կազմողներ՝ Մարիաննա Հարությունյան, Հարություն Վերմիշյան,

Աննա Խվորոստյանկինա, Հասմիկ Հովհաննիսյան

Խմբագիր՝ Ռուբեն Մարկոսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Զարտպրինտ» ՍՊԸ

Կազմի ձևավորումը՝ Էդգար Ամիրխանյան

Հրատ. սրբագրումը՝ Թագուհի Սուսլիյան

Ստորագրված է տպագրության՝ 27.11.2023:

Չափսը՝ 17 x 24սմ

Տպաքանակը՝ 100:

«Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ

Ազատության 24/2, ք. Երևան, 0014, ՀՀ

www.eiu.am

www.armdoct.am

ԳԻՏԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ARMDOCT
ERASMUS+ PROJECT

ISBN 978-9939-866-08-6
9 789939 866086